պատում եղած արձանագրությունները, որոնք պատկանում են՝ հնագույնը, 1021-ին, իսկ վերջինը՝ 1040-ին, բայց թագավորի անվան գրերի գծագրությունը պարզ չլինելու պատճառով զգուշացանք լրացնել այդ անունը։

4. Թեև վիմական արձանագրությունների մեջ Արշակունեաց *բառը երբեմն հանդիպում է առանց* p *գրի, ինչպես այս արձանագրության մեջ է, որ մատնանիշ է անում այդ ձևով արտասանված լինելը, բայց այդ բառը 5-րդ տողում գրինք* Արշակունեաց *ուղիղ ձևով։*

2. Աստվածածին եկեղեցու ամ պատին դրսից, այժմ ժամատան մեջ

ԺԲ դարի վերջերքը և ԺԳ դարի սկզբները

Հրատարակվում է առաջին անգամ

1 *Յանուն Այ գրեցաք*
2 *զծառզարդարին աւ-*
3 *ուր ժամն Սարգսի՝*
4 *Վաչուտին որդոյն,*
5 *արդեամբ դստեր*
6 *իւրո Վանենի։ Ով*
7 . . . . . .

Մանրություն.— *1. Արձանագրությունը խիստ մաշված է և ժամատունը շինելուց հետո նրա բովանդակությունը փորագրել են վերջինիս կամարներից մեկի վրա։ Տես արձ. № 54։*

Այստեղ ուշագրավ է այն, որ հնում, ինչպես երևում է այս օրինակից, արձանագրությունը նոր տեղում փոխագրել են ոչ թե նույնությամբ, այլ ազատ կերպով, նրա միտքը շարադրելով իրենց ուզած բառերով։

2. Ավագ Վաչեի որդի Սարգսից մինչև այժմ մեզ ոչ մի արձանագրություն ծանոթ չէր։ Տարբեր տեղերում պահպանվել են մի քանի արձանագրություններ Սարգսի որդի Վաչեին պատկանող, որոնք վերաբերում են՝ 1213 թ. (Կեչառուք)։ 1215 (Սաղմոսավանք), 1217 (Հովհաննավանք), 1220 (Հաղբատ), 1221 (Հառիճ), 1229 (Հոռոմոս), հետևապես այս Վաչեի հայրը պետք է ապրեր 12-րդ դարի վերջերքին և 13-րդի սկզբներին։

Բ. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑԻ

3. Ամենափրկչի աե ճակատին դրսից, Սմբատ Տիեզերակալի եւ Կյուրիկե առաջինի քանդակների գլխին

(Լուս. № 23)[1]

Ժ դարի 80-ական թվականներ

Հրատարակված է՝ Հար 293, Լալ 384, Մով 32

Կիւրիկէ թագաւոր, Սմբատ թագաւոր։

---

[1] *Տե՛ս էջ 44։*